ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ №20-Լ

«23» 01 2024 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 3-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 39 հրամանում լրացում կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 9-ի N 2-Լ հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 16.01.2023թ. «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում տարեկան աշխատանքների արդյունքների ամփոփման կարգը սահմանելու, տարեկան աշխատանքների մասին զեկուցագրերի օրինակելի ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 146 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 3-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Հրամանի 8-րդ կետից, Հրամանով հաստատված հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետից, 5-7-րդ ենթակետերից, 2-րդ կետի 1-ին ենթակետից և 3-րդ կետի 1-ին

ենթակետից հանել «**ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության**» բառերը,

3) Հրամանով հաստատված հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետում, 5-7-րդ ենթակետերում, 2-րդ կետի 1-ին ենթակետում և 3-րդ կետի 1-ին ենթակետում «**հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով**» բառերը փոխարինել «**սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով**» բառերով,

4) Հրամանով հաստատված հավելվածի 1-ին կետի 2-4-րդ ենթակետերում «**ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության**» բառերը փոխարինել «**սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով**» բառերով,

5) Հրամանի 8-րդ կետում, Հրամանով հաստատված հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետում, 5-7-րդ ենթակետերում, 2-րդ կետի 1-ին և 3-րդ կետի 1-ին ենթակետերում «**Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության**» բառերից հետո լրացնել «**ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով**» բառերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի

Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**